

ՊԱՇՏՊԱՆԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ *

ՀՏԴ 343

DOI: 10.52063/25792652-2025.1.24-77

ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lusine.hovhannisyan46@gmail.com,
ORCID: 0009-0006-1789-2692

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել պաշտպանության իրավունքը միջնորդավորված՝ պաշտպանի միջոցով, իրականացնելու պայմաններում առկա քրեադատավարական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ պայմանավորված պաշտպանի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններով:

Հետազոտության խնդիրն է պաշտպանի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները վեր հանելու միջոցով առաջարկել լուծումներ որոշ տեսագործական հարցերի համար:

Հետազոտությունն իրականացնելիս հեղինակն առաջնորդվել է այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են դեդուկցիան, վերլուծությունը, իրավական համեմատությունը և այլն: Դիտարկելով պաշտպանին որպես դատավարության սուբյեկտ՝ թե՛ նորմատիվ իրավական ակտերի պահանջների, թե՛ դատավարագետ-գիտնականների արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո, հեղինակը եզրահանգել է, որ թեև պաշտպանը ներկայացնում է մեղադրյալի շահերը, սակայն վերջինս նաև անկախ սուբյեկտ է: Այս համատեքստում քննարկման առարկա են դարձել ինչպես Փաստաբանի վարքագծի կանոնագրի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջները, այնպես էլ քննարկվել են պաշտպանի և մեղադրյալի դիրքորոշումների միջև հակասության դեպքերը, պաշտպանի կողմից ոչ իրավաչափ միջոցներով պաշտպանության իրականացման արգելքը, վստահորդի պաշտպանության իրականացումից հրաժարվելու իրավաչափությունը և հարակից հարցեր:

Հեղինակը եզրահանգել է, որ պաշտպանի դատավարական անկախության փաստարկներից են թե՛ ապօրինի միջոցներով պաշտպանության իրականացման արգելքը, թե՛ այն, որ վերջինս, մեղադրյալից անջատ, կարգապահական պատասխանատվության առանձին սուբյեկտ է: Ի վերջո, քննարկելով պաշտպանի և պաշտպանյալի դիրքորոշումների միջև առկա հնարավոր հակասությունները, հեղինակը թեպետ համակարծիք է, որ մեղքի և մեղավորության ընդունման հարցում դիրքորոշումները մեծապես տարբերվել չեն կարող, սակայն իրավիճակն այլ է՝ բացառապես իրավական հարցերի շուրջ առկա տարաձայնությունների պարագայում:

Հիմնաբառեր՝ պաշտպանության իրավունք, պաշտպան, փաստաբան, դատավարական կարգավիճակ, ներկայացուցիչ, դատավարական ինքնուրույնություն, փաստաբանի վարքագծի կանոններ:

* Հոդվածը ներկայացվել է 31.01.2025թ., գրախոսվել՝ 03.03.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Ներածություն

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում քննարկելու պաշտպանի դատավարական կարգավիճակի վերաբերյալ որոշ վիճահարույց հարցեր՝ առանցքում ունենալով պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման արդիական հիմնահարցը:

Պաշտպանի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները վեր հանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել պաշտպանի մասնակցության ձևը վարույթին՝ ՀՀ քրեական դատավարության համակարգում՝ որպես ընդհանուր ելակետ՝ այնուհետև ուշադրություն դարձնելով առանձին քրեադատավարական կառուցակարգերի շրջանակում դրսևորման ձևերին:

Մասնավորապես՝ ի՞նչ տեղ ունի պաշտպանը քրեադատավարական սուբյեկտների ցանկում, ո՞ր հանգամանքներն են ընդգծում պաշտպանի յուրահատուկ դերը, արդյո՞ք պաշտպանի և մեղադրյալի դիրքորոշումները մշտապես համընկնում են, ինչպե՞ս և ինչո՞վ պետք է առաջնորդվեն փաստաբանները հակասության առաջացման պարագայում:

Առաջադրված հարցերին պատասխանելու համար հարկ է քննարկել ինչպես տեսական, այնպես էլ նորմատիվային կարգավորումներ՝ փորձելով հավասարակշռել պաշտպանության պատշաճ իրականացման գործառույթը, փաստաբանի՝ օրենքով չարգելված միջոցներով պաշտպանություն իրականացնելու հրամայականի հետ:

Պաշտպանության իրավունքի միջնորդավորված՝ պաշտպանի միջոցով, իրականացումը քրեական դատավարությունում

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սկզբունքների ցանկում իր ուրույն դերն ու նշանակությունը ունի մեղադրյալի պաշտպանության իրավունքը սահմանող 20-րդ հոդվածը: Համաձայն մեջբերված կարգավորման՝ մեղադրյալն իրավասու է պաշտպանվելու ինչպես անձամբ, այնպես էլ՝ պաշտպանի միջոցով:

Հատկանշական է, որ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում ևս՝ մաս կազմելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների գլխի: Պաշտպանության իրավունքի ամրագրմանը, դրա գործնական իրացման կարևորությանը անդրադարձ են կատարել նաև մի շարք միջազգային-իրավական փաստաթղթեր:

«Պաշտպանության իրավունք» եզրույթի սահմանմանը անդրադարձ կատարվել է թե՛ միջազգային, թե՛ հայրենական դատավարագետների կողմից (Ostavciuc 49; Chen 105-129; Tuca 177-184; Breyer 1-12; Ղուկասյան 9): Ամբողջացնելով արտահայտված մոտեցումները՝ կարող ենք արձանագրել, որ պաշտպանության իրավունքը սահմանադրական հիմնարար երաշխիք և քրեադատավարական սկզբունք է, որը մեղադրյալին հնարավորություն է տալիս արդյունավետ մասնակցություն ունենալու քրեական դատավարությանը, պաշտպանվելու ներկայացված մեղադրանքից՝ ի թիվս այլնի հակադարձելով մեղադրանքի կողմի փաստարկներին, ինչպես նաև ներկայացնելու իր դիրքորոշումը:

Պաշտպանության իրավունքը մեղադրյալին վերապահվող իրավունքներից հիմնականն է և մյուս իրավունքների երաշխավորման միջոցը: Այս իրավունքը ներառում է ինչպես անձամբ պաշտպանվելու հնարավորությունը, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնից անկախ՝ պաշտպանի կողմից իրավաբանական աջակցություն ստանալու իրավունքը: Պաշտպանության իրավունքը կարևոր գործիք է մարդու իրավունքների պաշտպանության և դատավարական գործընթացների ամբողջականությունը պահպանելու համար:

Թեպետ պաշտպանության իրավունքի իրացումն անպայմանորեն փոխկապակցված չէ այն միջնորդավորված՝ պաշտպանի միջոցով, իրացնելու հետ, և անձն ազատ է պաշտպանվելու անձամբ, սակայն կարծում ենք, որ

քրեադատավարական սուբյեկտների ցանկում հարկ է առանձին կերպով անդրադառնալ պաշտպանին՝ որպես վարույթի մասնավոր մասնակցի:

Իրավաբանական օգնության իրավունքի արդյունավետության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի փաստաբանության ինստիտուտին վերաբերող նորմերի սահմանադրական ամրագրումը: 2015 թվականին ընդունված փոփոխություններով Սահմանադրության 64-րդ հոդվածը երաշխավորում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Այսպիսով՝ փաստաբանությունը որպես ինստիտուտ առաջին անգամ ստացել է սահմանադրական ամրագրում: Սահմանադրությամբ նաև ուղղակիորեն ամրագրված է անձի իրավունքը՝ «մասնանշելու» իր նախընտրած փաստաբանին (Պողոսյան և Սարգսյան 78):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով արդար դատաքննության կառուցակարգին, իրավացիորեն արձանագրել է, որ «թեև ոչ բացարձակ իմաստով, սակայն յուրաքանչյուր անձի, որին քրեական մեղադրանք է ներկայացվել, իրավունքը արդյունավետորեն պաշտպանվել պաշտպանի կողմից, անհրաժեշտության դեպքում նաև՝ պետության կողմից նշանակված փաստաբանի միջոցով, արդար դատաքննության բնութագրիչներից մեկն է» (Կրոբմախն ընդդեմ Ֆրանսիայի 49):

Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական կարգավորումների ներքո որպես պաշտպան կարող է հանդես գալ բացառապես փաստաբանի որակավորում ունեցող իրավաբանը: Այսինքն՝ այս գործառույթը որոշակիորեն փաստաբանների մենաշնորհն է: Կարծում ենք՝ օրենսդրի նման դիրքորոշումն արդարացված է՝ հաշվի առնելով, որ այդպիսով երաշխավորվում է փաստաբանի որակավորում ունեցող անձանց և նրանց կողմից ապագայում տրամադրվելիք փաստաբանական ծառայությունների ընդունելի որակը՝ հիմք ընդունելով մասնագիտական կառույցի՝ Փաստաբանների պալատի կողմից տրամադրվող արտոնագիրը:

Փաստաբանական ծառայությունների և հետևաբար՝ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի որակի ապահովումն ուղղակիորեն փոխկապակցված է մրցակցության սկզբունքի հետ: Մասնավորապես՝ մրցակցության սկզբունքի առանցքներից է «Չենքերի հավասարության» դրույթը, համաձայն որի՝ դատավարության մասնակիցները պետք է ունենան հավասար հնարավորություններ ներկայացնելու իրենց դիրքորոշումը: Ընդ որում՝ դատավարագիտության մեջ ընդունված կարծիքի համաձայն՝ զենքերի հավասարության ապահովումը ոչ միայն զուտ իրավական երաշխիք է, այլև անձանց, ավելի հաճախ՝ մեղադրյալի, արժանապատվության հարգման միջոց (Omkar 75-116): Հաշվի առնելով այն, որ հանրային մեղադրողի դերում մշտապես հանդես է գալիս բարձրագույն իրավաբանական կրթությամբ անձ, նման կարգավորման նախատեսումը ևս որոշակիորեն հավասարակշռում է դատավարության կողմերը: Ընդ որում՝ նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքը՝ պարզ է դառնում, որ պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հիմնահարցն արդիական է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանադրությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը նախանշում են պաշտպանի գործունեության սկզբունքները, ինչպես նաև՝ սահմանում պաշտպանության միջոցներից որոշները: Ավելին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր փաստաբանների նկատմամբ պարտադիր կիրառություն ունի «Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը»: Այս փաստաթուղթը սահմանում է փաստաբանական էթիկայի սկզբունքները և փաստաբանի վարքագծի կանոնները՝ հիմնվելով փաստաբանության

բարոյական չափանիշների և ավանդույթների, ինչպես նաև փաստաբանական գործունեության միջազգային ստանդարտների և կանոնների վրա: Հետևաբար՝ թեպետ պաշտպանը վարույթի մասնավոր մասնակից է, չի հանդիսանում և չի կարող հանդիսանալ հանրային իշխանության ներկայացուցիչ, սակայն նրա գործունեության նկատմամբ կիրառվում են մի շարք պարտադիր բնույթ ունեցող կարգավորումներ:

Նկատի ունենալով, որ պաշտպանի գործունեության վրա տարածվում են ոչ միայն նորմատիվ իրավական ակտերի դրույթները, այլև, մեր կարծիքով, համընդհանուր բարոյական և էթիկական պահանջները և վերլուծելով ինչպես օրենսդրական, այնպես էլ տեսական մոտեցումները՝ կարող ենք առանձնացնել պաշտպանության իրականացման ընթացքում պաշտպանի գործունեության նկատմամբ կիրառվող հետևյալ սկզբունքները.

- անկախություն,
- գաղտնիություն,
- ձեռնհասություն և պատասխանատվություն,
- շահերի բախման բացառում,
- հարգանք իրավական գործընթացների և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Պաշտպանի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում

Պաշտպանը որոշակի, յուրահատուկ կարգավիճակ ունի քրեադատավարական սուբյեկտների շարքում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջինս ներկայացնում է ոչ թե իր, այլ ուրիշ մասնավոր մասնակցի՝ մեղադրյալի իրավունքները և շահերը: Թեպետ պաշտպանը, որպես այդպիսին, չունի իր հետ անձնապես կապված շահեր քրեական դատավարությունում, սակայն դա չի նվազեցնում վստահորդի շահերը լավագույնս ներկայացնելու պարտականությունը:

Պաշտպանի դատավարական կարգավիճակի և փոխկապակցվածության վերաբերյալ հարցերը տևական ժամանակ գտնվել են տեսաբանների ուշադրության կենտրոնում: Հետաքրքրական է, որ այս առնչությամբ առկա են տրամագծորեն հակոտնյա կարծիքներ: Օրինակ՝ դեռևս խորհրդային տարիներին արտահայտվել էր կարծիք առ այն, որ պաշտպանը դատարանի օգնականն է (Чепухов 53; Перлов 26): Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պաշտպանը որևէ դեպքում չի կարող դիտարկվել որպես դատարանին կամ այլ վարույթն իրականացնող մարմնին օժանդակող սուբյեկտ: Պաշտպանին որպես վարույթն իրականացնող մարմնին օժանդակող սուբյեկտ չդիտարկելն ուղղակիորեն փոխկապակցված է փաստաբանական գործունեության հիմքում ընկած այնպիսի կառուցակարգի հետ, ինչպիսին է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված փաստաբանական գաղտնիքը: Ընդ որում՝ համաձայն մեջբերված հոդվածի՝ փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (կյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն: Հետևաբար՝ փաստաբանին որպես քրեական դատավարության մասնակից դիտարկելիս որպես մեկնակետ, ի թիվս այլնի, մեր կարծիքով, պետք է ընդունել փաստաբանական գաղտնիքի կառուցակարգը:

Այլ գիտնականների կարծիքով՝ պաշտպանները մեծ պատասխանատվություն են ստանձնում ոչ միայն մեղադրյալի, այլև արդարադատության համակարգի առջև (Abrams 2015; Бойков 69): Համաձայն այդ կարծիքի՝ պաշտպանի առաջնային

պարտականությունը մեղադրյալին ամբողջական իրավական աջակցության տրամադրումն է՝ երաշխավորելով, որ մեղադրյալն ունի մանրակրկիտ և ամբողջական պատկերացում իր իրավունքների և պարտականությունների մասին: Այլ կերպ՝ պաշտպանը և՛ ինքնուրույն սուբյեկտ է՝ օժտված իր իրավունքների և պարտականությունների համախմբով, և՛ մեղադրյալի «ներկայացուցիչ»:

Այս համատեքստում դժվար է չհամաձայնել կարծիքի հետ, որ պաշտպանի և մեղադրյալի հարաբերությունները չեն կարող դիտարկվել բացառապես որպես ներկայացուցչի և ներկայացվողի հարաբերություն, քանի որ այս երկու սուբյեկտները փոխլրացնում են միմյանց (Ղուկասյան 19): Փոխլրացման հանգամանքը կարևոր է նաև նրանով, որ մեղադրյալը, որպես այդպիսին, չունի պարտականություն ծանոթ լինելու իր նկատմամբ կիրառվող նորմատիվ կարգավորումների բովանդակությանը, սկզբունքներին, ունենալու հստակ պատկերացում առաջարկվող կամ հնարավոր պաշտպանության միջոցների օրինականության վերաբերյալ: Հետևաբար՝ բացառված չէ, որ մեղադրյալը որպես պաշտպանության միջոց դիտարկի նաև ոչ իրավաչափ միջոցների կիրառումը: Եթե պաշտպանի դատավարական կարգավիճակը ներկայացվի բացառապես որպես մեղադրյալի «ներկայացուցիչ», ապա կստացվի, որ պաշտպանը սահմանափակված է միմյանց մեղադրյալի կամքով, և, փաստորեն, պաշտպանի դատավարական իրավունքները և պարտականությունները նախանշվում են մեղադրյալի կողմից: Սակայն միանշանակ է, որ պաշտպանը, թեև մշտապես առաջնորդվում է իր վստահորդի լավագույն շահով, սակայն ունի նաև հանձնառություն՝ երաշխավորելու, որ «մեղադրյալի լավագույն շահը» և դրա կենսագործման երաշխավորումը մշտապես համապատասխանեն կիրառելի օրենսդրությանը:

Այսպես՝ անկախ իրավական վեճի բնույթից, պաշտպանի և մեղադրյալի հարաբերություններից կամ ցանկացած այլ իրավական և փաստական հանգամանքից՝ պաշտպանը երբևէ չի կարող դիտարկել անձի պաշտպանությունն ապօրինի միջոցներով իրականացնելու հնարավորությունը: Միաժամանակ, սակայն, հարկ է նկատել, որ որևէ նորմատիվ իրավական ակտ սպառնիչ կերպով չի թվարկում և չի կարող թվարկել այն գործիքները, որոնք պաշտպանը կարող է կիրառել: «Օրենքով չարգելված միջոցներով» ձևակերպումը բավականին լայն հնարավորություններ է ստեղծում փաստաբանների համար, այդ թվում՝ ոչ այնքան կանխատեսելի միջոցներով պաշտպանության իրականացման համար՝ պայմանով, որ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի հատուկ կարգավորումները լրացուցիչ սահմանափակումներ չեն նախատեսում:

Այնուամենայնիվ, բացառված չէ, որ, չնայած պաշտպանի ջանքերին, մեղադրյալն, այնուամենայնիվ, հակված լինի ոչ իրավաչափ միջոցներով պաշտպանվելուն: Նման դեպքերում «Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը» սահմանում է, որ փաստաբանը նախ պետք է պաշտպանյալին պարզաբանի ընտրված միջոցների անթույլատրելիությունը: Այնուհանդերձ, եթե անձի դիրքորոշումը մնում է անփոփոխ, պաշտպանը պետք է հրաժարվի վստահորդի հանձնարարությունն ընդունելուց: Հատկանշական է, որ նման դիրքորոշում արտահայտվել է նաև արտասահմանյան տեսաբանների կողմից դեռևս 1980-ական թվականներին (Erickson 75-91), ինչը ևս մեկ անգամ ընդգծում է խնդրո առարկայի համընդհանուր արդիականությունը տարբեր իրավական համակարգերում: Վստահորդի հանձնարարականի ընդունումից հրաժարվելը, որոշ դեպքերում կարող է նշանակել պաշտպանի՝ վարույթին հետագա մասնակցությունն ունենալու անհնարինություն, կամ այլ կերպ՝ պաշտպանության իրականացումից հրաժարում:

Սակայն պաշտպանի հրաժարվելը վարույթին մասնակցելուց և, ըստ էության, անձի պաշտպանությունն իրականացնելուց, պայմանավորված չէ միայն պաշտպանի մոտ նման կամահայտնության առկայությամբ: Այլ կերպ՝ պաշտպանը ազատ չէ ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվելու ստանձնած վստահորդի

պաշտպանության իրականացումից: Միաժամանակ, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ պաշտպանության իրավունքի իրացմանն առնչվող կարգավորումները, կարելի է եզրահանգել, որ, որպես կանոն, պաշտպանյալն ազատ է ցանկացած պահի հրաժարվել պաշտպանից: Պաշտպանը կարող է հրաժարվել իր պաշտպանյալի՝ հետագա ներկայացուցչությունն իրականացնելուց խիստ սահմանափակ դեպքերում, որոնք նախատեսված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և «Փաստաբանի վարքագծի կանոնադրով»: Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնադրի» 3.8.2-րդ կետին՝ այդ դեպքերի ցանկում են, օրինակ, երբ վստահորդը, փաստաբանի պարզաբանումներին հակառակ, կատարում է գործողություններ՝ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնադրի խախտմանը, հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով, վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ և այլն: Չուզահեռաբար, սակայն, պաշտպանին՝ որպես դատավարական սուբյեկտի նկարագրում է նաև այն, որ անգամ վստահորդի հետ կնքված իրավական պայմանագրի լուծման շրջանակում փաստաբանը ոչ միայն պարտավոր է բացատրել վստահորդին դրա պատճառները, այլև որևէ դեպքում թույլ չտալ, որ վստահորդը հայտնվի անելանելի վիճակում:

Այսինքն՝ պաշտպանյալի՝ ապօրինի միջոցներով պաշտպանվել ցանկանալու և այդ որոշումից չհրաժարվելու դեպքում պաշտպանը հայտնվում է մի իրավիճակում, երբ վերջինս թեպետ այդ հիմքով կարող է հրաժարվել պաշտպանության իրականացումից, սակայն միաժամանակ պարտավոր է ապահովել մեղադրյալի չհայտնվելը անելանելի վիճակում:

Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար կարելի է քննարկել գործնական օրինակ, երբ պաշտպանյալի դիրքորոշումը՝ ապօրինի միջոցներով պաշտպանվելու վերաբերյալ, անդրդվելի է, պաշտպանը իրավաչափորեն հրաժարվում է նմանօրինակ հանձնարարության կատարումից: Այլ կերպ՝ առկա են մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելուց հրաժարվելու իրավաչափության վավերապայմանները: Միևնույն ժամանակ, սակայն, Վերաքննիչ քրեական դատարանին բողոք ներկայացնելու ժամկետի ավարտին մնացել է 3 օր, կամ նույն օրը նշանակված է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝ քննիչի կողմից ներկայացված միջնորդության քննարկման դատական նիստ, և վարույթին այլ պաշտպան ներգրավված չէ: Կարծում ենք՝ նման դեպքերում, թեպետ պաշտպանության իրականացումից հրաժարման հիմքերը առկա են, առավել առաջնային նշանակություն ունի պաշտպանի պարտականությունը՝ թույլ չտալ, որ մեղադրյալը հայտնվի անելանելի վիճակում: Պաշտպանը նախ պարտավոր է, օրինակ, ներկայացնել վերաքննիչ բողոքը կամ մասնակցել վերոնշյալ դատական նիստին, որից հետո միայն հրաժարվել պաշտպանության իրականացումից:

Այս համատեքստում որոշակիորեն կարևոր է նաև պաշտպանության իրականացումից հրաժարման դատավարական կարգը: Պաշտպանը վարույթին մասնակցում է անձամբ պաշտպանյալի (վստահորդ) կամ այլ անձի հետ (հաճախորդ) կնքված պայմանագրի հիման վրա: Հարց է առաջանում. արդյո՞ք պայմանագրի լուծումը բավարար է՝ վարույթին մասնակցությունը դադարեցված համարելու համար: Կարծում ենք՝ նման դեպքերում առավել կարևոր նշանակություն ունի պաշտպանի կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված ծանուցումը, որով վերջինս հայտնում է, որ այլևս չի ներկայացնում մեղադրյալի շահերը: Նշված ծանուցումը վարույթն իրականացնող մարմնին տրամադրելուց հետո (վարույթին մասնակցության փաստացի դադարեցում) և օրենքով նախատեսված ժամկետներում փաստաբանն ազատ է լուծելու կնքված պայմանագիրը (վարույթին մասնակցության իրավական

դադարեցում): Վարույթին մասնակցելու փաստական և իրավական դադարեցման միջև հնարավոր մրցակցության դեպքում, կարծում ենք, առաջնայնությունն պետք է տրվի մասնակցության փաստացի դադարեցմանը՝ վարույթն իրականացնող մարմինն ծանուցելու միջոցով: Ընդ որում՝ քննարկվող դեպքում վարույթն իրականացնող մարմինն ուղղված պաշտպանի ծանուցումը չպետք է պարունակի տեղեկատվություն՝ պաշտպանությունից հրաժարման պատճառի մասին, քանի որ փաստաբանի վարքագծի նկատմամբ շարունակվում են կիրառելի լինել փաստաբանական գաղտնիքի դրույթները: Այլ կերպ՝ անգամ հրաժարումից հետո փաստաբանը չի կարող վտանգել նախկինում վստահորդ հանդիսացած անձի շահերը: Ասվածից բացառություն կարող են կազմել միայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ փաստաբանական գաղտնիքի հրապարակման դեպքերը:

Պաշտպանի՝ ոչ միայն մեղադրյալի ներկայացուցիչը, այլև դատավարական առանձին սուբյեկտ լինելու փաստը հավաստող մեկ այլ փաստարկ է այն, որ որպես դատավարական սուբյեկտ՝ պաշտպանը կարող է ենթարկվել պատասխանատվության: Ընդ որում՝ այդ պատասխանատվությունը ոչ թե պաշտպանին է որպես մասնավոր, ֆիզիկական անձի (օրինակ՝ եթե վերջինս ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարի), այլ բխում է անմիջապես պաշտպան հանդիսանալու հանգամանքից: Այսպես՝ եթե պաշտպանության իրականացման շրջանակում փաստաբանը դրսևորի արգելված վարքագիծ, թե՛ վարույթն իրականացնող մարմինը, թե՛ վստահորդը, թե՛ երրորդ անձինք իրավասու են դիմելու ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին՝ քննարկելու և լուծելու փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Պաշտպանի՝ որպես քրեական դատավարության որոշակիորեն ինքնավար սուբյեկտի հանգամանքը, ըստ մեզ, ամրապնդվում է նաև վերջինիս՝ վարույթին ներգրավված գործընթացում: Հայտնի է, որ քրեադատավարական սուբյեկտների ճնշող մեծամասնությունը վարույթին ներգրավվում կամ վարույթում հանդես է գալիս օրենքի ուժով: Այսպես՝ քննիչն իրականացնում է նախաքննություն, դատախազը՝ հսկողություն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, դատարանը գործը լուծում է ըստ էության, վկան հրավիրվում է՝ հայտնելու իրեն հայտնի տեղեկություններ և այլն: Մինչդեռ փաստաբանը վարույթին ներգրավվում է գործարքի՝ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:¹ Հետևաբար՝ նրա մասնակցությունը վարույթին ոչ միայն իրավապաշտպան գործունեության տեսակ է, այլև՝ ձեռնարկատիրական:

Գործնականում հնարավոր է իրավիճակ, որ մեղադրյալը գտնվի, օրինակ, քրեակատարողական հիմնարկում, և վարույթն իրականացնող մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չունենա անմիջապես վերջինիս ներկայացնելու՝ պաշտպանի ներգրավման հարցը լուծելու համար: Քննարկման առարկա չդարձնելով քրեական վարույթին պաշտպանի մասնակցության բոլոր դեպքերը՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է անդրադառնալ և մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կարգավորումը, համաձայն որի փաստաբանը մեղադրյալի պաշտպանությունը ստանձնում է մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների համաձայն վերլուծելով վերոգրյալ դրույթը՝ պարզ է դառնում, որ վարույթն իրականացնող մարմինը որևէ պարագայում չի կարող խոչընդոտել պաշտպանի ներգրավմանը

¹ Ասվածից բացառություն է հանրային պաշտպանի՝ վարույթին ներգրավված դեպքը, որը, սակայն, չի հանդիսանում սույն հոդվածի հետազոտման առարկա:

քրեական վարույթին: Այն պահից, երբ փաստաբանը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացնում թվարկված սուբյեկտներից որևէ մեկի հրավեր-դիմումը, վերջինս արդեն իսկ պետք է համարվի մեղադրյալի պաշտպան՝ դատավարական կարգավիճակից բխող բոլոր իրավունքներով և պարտականություններով: Միակ վավերապայմանը մեղադրյալի **հետագա** գրավոր համաձայնությունն է:

Պաշտպանի և մեղադրյալի դիրքորոշումների հակասությունները և հնարավոր լուծումները

Պաշտպանի դատավարական կարգավիճակի շուրջ առավել հստակ պատկերացում կազմելու համար հարկ է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչպես պետք է վարվեն պաշտպանները, երբ առկա է հակասություն նրանց և մեղադրյալի դիրքորոշումների միջև՝ հաշվի առնելով նախորդիվ կատարած եզրահանգումը, որ պաշտպանը ոչ միայն մեղադրյալի ներկայացուցիչն է, այլև՝ ինքնուրույն սուբյեկտ:

Այս հարցը, սակայն, անհրաժեշտ է քննարկել 2 դիտանկյունից՝ տարակարծ դիրքորոշումներ մեղավորության և այլ իրավական և էթիկական հարցերի շուրջ:

Անդրադառնալով մեղադրյալի մեղավորության շրջանակում հակոտնյա դիրքորոշումների առկայությանը՝ հարկ է նկատել, որ, թեպետ տեսական գրականության մեջ առկա են բազմաթիվ մոտեցումներ խնդրո առարկայի վերաբերյալ, որոնք, այդ թվում, հանգում են նրան, որ, հակառակ մեղադրյալի կարծիքի, պաշտպանը պետք է ունենա իրավունք՝ հայտարարելու մեղադրյալի մեղավորության մասին, կարծում ենք, որ նման դիրքորոշումները հակասում են և՛ անմեղության կանխավարկածին, և՛ պաշտպանության իրավունքին: Միաժամանակ, հիմք ընդունելով «պաշտպան» սուբյեկտի դատավարական առանձնահատկությունները, նման հայտարարության կատարումը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ գործի ելքի վրա:

Այս առնչությամբ պետք է համաձայնել օրենսդրի կողմից որդեգրած կարգավորումների հետ: Այսպես՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի՝ պաշտպանն իրավունք չունի, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման, ընդունելու նրա առնչությունը ենթադրյալ հանցանքին կամ մեղավորությունը դրա կատարման մեջ: Միևնույն ժամանակ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման, չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը: Նույնաբնույթ դրույթ պարունակում է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, համաձայն որի՝ փաստաբանը պարտավոր է չանել հայտարարություններ վստահորդի մեղավորության ապացուցված լինելու վերաբերյալ, եթե վերջինս ժխտում է դա:

Այսինքն՝ պաշտպանը երբևէ չի կարող մեղավորության հարցի շուրջ արտահայտել պաշտպանյալի դիրքորոշումից տարբերվող կարծիք, հատկապես, երբ խոսքը վերաբերում է մեղավորության ընդունմանը: Այնուամենայնիվ, որոշ բացառություններ նախատեսված են այն դեպքերում, երբ պաշտպանյալը, արարքը կատարած չլինելով, ցանկանում է խոստովանել:

Պաշտպանի և պաշտպանյալի դիրքորոշումների միջև հակասության շրջանակում հնարավոր է նաև դեպք, երբ այն ունենա զուտ իրավական ձևակերպում: Օրինակ՝ դիրքորոշումների միջև առկա է անհամաձայնություն՝ իրավական փաստարկը պաշտպանական ճառում ներառելու կամ չներառելու կամ որևէ միջնորդություն դատարան ներկայացնելու հարցերի շուրջ: Նման իրավիճակներում, կարծում ենք, պետք է կրկին հաշվի առնել այն հանգամանքը, որ պաշտպանը, որպես սուբյեկտ, ոչ միայն մեղադրյալի ներկայացուցիչն է, այլև օժտված է որոշակի դատավարական ինքնուրույնությամբ: Կարծում ենք, պաշտպանը բացառապես իրավական հարցերի կապակցությամբ կարող է դիրքորոշում ներկայացնել անգամ,

Երբ առկա չէ մեղադրյալի համաձայնությունը, եթե վստահ է, որ դիրքորոշման ներկայացումը որևէ դեպքում առնվազն չի վնասի մեղադրյալի իրավունքները:

Եզրահանգումներ

Պաշտպանության իրավունքը առանցքային տեղ ունի մեղադրյալին տրամադրված իրավունքների ցանկում: Պաշտպանության իրավունքի իրացման շրջանակում էական նշանակություն ունի պաշտպանի՝ որպես վարույթն իրականացնող մարմնից անկախ դատավարական սուբյեկտի մասնակցությունը: Պաշտպանը ունի յուրահատուկ կարգավիճակ քրեական դատավարությունում՝ միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես ինքնուրույն սուբյեկտ, և՛ մեղադրյալի ներկայացուցիչ:

Պաշտպանի գործունեության նկատմամբ պարտադիր կիրառելիություն ունի ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, այլև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը և «Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը»: Փաստաբանի մասնակցության շրջանակը քրեադատավարական վարույթին, նրա իրավունքները և պարտականությունները ուղղակիորեն փոխկապակցված են փաստաբանական գաղտնիքի կառուցակարգի հետ, որը ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն: Ավելին՝ փաստաբանական գաղտնիքի բացահայտման արգելքը ժամանակային սահմանափակման ենթակա չէ:

Թեպետ ընդհանուր կանոնը հանգում է նրան, որ պաշտպանը և մեղադրյալը ունեն համընկնող դիրքորոշումներ, սակայն գործնականում հնարավոր է նաև այլ իրավիճակ: Ինչպես քննարկվեց վերը, պաշտպանը չի կարող անձի ներկայացուցչություն իրականացնելիս կիրառել օրենքով արգելված միջոցներ: Այնուամենայնիվ, եթե մեղադրյալի դիրքորոշումը՝ օրենքով արգելված միջոցով պաշտպանվելու, չի ենթարկվում փոփոխության, պաշտպանը պարտավոր է հրաժարվել հանձնարարության կատարումից: Ընդ որում՝ հանձնարարության կատարումից հրաժարումը կարող է ենթադրել առհասարակ պաշտպանության իրականացումից հրաժարում: Սակայն նույնիսկ այդ դեպքում պաշտպանը չպետք է թույլ տա մեղադրյալի՝ անելանելի վիճակում հայտնվելը, մասնավորապես, օրինակ՝ չներկայացնելով բողոք կամ չմասնակցելով դատական նիստին:

Պաշտպանը ինքնուրույն՝ առանց վստահորդի ուղղակի համաձայնության, երբևէ չի կարող մեղադրյալի մեղավորության վերաբերյալ հայտարարություններ անել: Միևնույն ժամանակ, տարակարծ դիրքորոշումների դեպքում փաստաբանի գործունեության նկատմամբ, միևնույն է, կիրառելի են վերոնշյալ նորմատիվային կարգավորումները:

Կարծում ենք, սակայն, որ այն դեպքերում, երբ տարաձայնությունները վերաբերում են զուտ իրավական հարցերին, պաշտպանի՝ ինքնուրույն իր մարտավարությունը մշակելու իրավունքը շարունակում է գործել, եթե միանշանակ է, որ իրավական դիրքորոշման ներկայացումը որևէ կերպ չի կարող վնասել մեղադրյալի շահերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղուկասյան, Հրայր. «Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում». Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001, 9-19:
2. Պողոսյան, Վարդան, Սարգսյան, Նորա. ՀՀ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը-համառոտ պարզաբանումներ. Տիգրան Մեծ հրատ, 2016, էջ 78:
3. Бойков, Александр. Этика профессиональной защиты по уголовным делам, 1978, стр. 69.
4. Перлов, Илья. Судебное следствие в советском уголовном процессе, 1956, стр. 26.

5. Чельцов, Михаил. *Задачи советской защиты и процессуальное положение адвоката. Сборник «Адвокат в уголовном процессе»*, 1954, стр. 53.
6. Sisk, Gregory. *Legal Ethics: A Comprehensive Guide to Professional Responsibility*. Wolters Kluwer, 2015.
7. Breyer, Stephen G. *The legal profession and public service*. National Legal Center for the Public Interest, 2000, pp. 1-12.
8. Chen, Ruihua. *Retrospect and Prospect of Criminal Defense System in the Past Forty Years. Models of Criminal Procedure System*. Springer, Singapore, 2022, pp. 105-129.
9. Erickson, William. "Perjurious Defendant - A Proposed Solution to the Defense Lawyer's Conflicting Ethical Obligations to the Court and to His Client". *Denver Law Journal*, Volume: 59 Issue: 1, 1981, pp. 75-91.
10. European Court of Human Rights. *case Number 29731/96*. 13 February 2001.
11. Omkar, Sidhu. "Equality of Arms." *The Concept of Equality of Arms in Criminal Proceedings under Article 6 of the European Convention on Human Rights*. Intersentia, 2017, pp. 75–116.
12. Ostavciuc, Dinu. "Enrusing the right to defense in the Criminal Process". *International Scientific Journal «Supremacy of Law»*, N 2, 2022, p. 49.
13. Tuca, Alina-Marilena. "Enforcement of the right of defense in Criminal Trial". *Lex ET Scientia International Journal LESIJ*, NO. XXVII, Vol. 2, 2020, pp. 177-184.

WORKS CITED

1. Ghukasyan, Hrayr. *Pashtpani datavarakan vichaky nakhnakan qnnut'yan phulum*. Yerevani hamalsarani hratarckh'ut'yun, [The Procedural Status of the Defender at the Preliminary Investigation Stage], Yerevan, 2003. (In Armenian)
2. Perlov, Ilya. *Sudebnoe sledstvie v sovetskom ugolovnom protsesse* [Judicial Investigation in the Soviet Criminal Process], Moscow, 1956. (In Russian)
3. Poghosyan Vardan, Sargsyan Nora. *HH 2015 t'. khmbagrut'yamb Sahmanadrut'yuny—hamarot parzabanumner*. Tigran Mets hrar, [The 2015 Amended Constitution of the Republic of Armenia – Brief Explanations], Yerevan, 2016. (In Armenian)
4. Boikov, Aleksandr. *Etika professional'noy zashchity po ugolovnym delam*. [The Ethics of Professional Defense in Criminal Cases], Moscow, 1978. (In Russian)
5. Cheltsov, Mikhail. *Zadachi sovetskoy zashchity i protsessual'noe polozhenie advokata. Sbornik Advokat v ugolovnom protsesse*. [The Tasks of Soviet Defense and the Procedural Status of the Lawyer. The collection *The Lawyer in the Criminal Process*], Moscow, 1954. (In Russian)

CERTAIN SPECIFICS FEATURES OF THE PROCEDURAL STATUS OF THE DEFENDER IN CRIMINAL PROCEDURE

LUSINE HOVHANNISYAN

*Yerevan State University, Faculty of Law,
Department of Criminal Procedure and Criminalistics,
Ph.D. Student;
Chamber of Advocates of RA, Attorney at law,
Yerevan, the Republic of Armenia*

The given study examines the procedural aspects of exercising the right to defense through a defense attorney, considering the specific procedural status of the attorney. The

research employs methods of deduction, analysis, and legal comparison. Considering the lawyer as a procedural subject in the context of normative acts and scientific views, the author concludes that, despite representing the interests of the accused, the lawyer is an independent participant of the proceedings.

The study discusses the Code of Ethics for Attorneys and the Law on Advocacy of Armenia, addressing conflicts between the attorney and the accused, the prohibition on unlawful defense methods, and the attorney's right to refuse defense. The author argues that procedural independence is supported by the prohibition of illegal defense methods and the attorney's separate disciplinary liability.

Regarding potential conflicts, the author agrees that positions on guilt should generally align. However, differences may arise in purely legal matters, where the attorney's professional judgment takes precedence.

Keywords: *Right to defense, defense attorney, lawyer, procedural status, representative, procedural independence, code of conduct for attorneys.*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРОЦЕССУАЛЬНОГО СТАТУСА ЗАЩИТНИКА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

ЛУСИНЕ ОГАНЕСЯН

*аспирант кафедры уголовного процесса и криминалистики
юридического факультета*

*Ереванского государственного университета,
член Адвокатской палаты РА, адвокат,
г. Ереван, Республика Армения*

Исследование рассматривает процессуальные особенности осуществления права на защиту через адвоката с учетом его процессуального статуса. Используя методы дедукции, анализа и правового сравнения, автор рассматривает адвоката как процессуального субъекта в свете нормативных актов и научных взглядов и приходит к выводу о том, что, несмотря на представление интересов обвиняемого, адвокат является независимым участником процесса.

В статье обсуждается Кодекс профессиональной этики адвокатов и Закон Армении «Об адвокатуре», включая вопросы конфликта позиций адвоката и обвиняемого, запрета на незаконные методы защиты и правомерности отказа адвоката от ведения защиты. Автор утверждает, что процессуальная независимость адвоката подтверждается запретом на незаконные методы защиты и его отдельной дисциплинарной ответственностью, не зависящей от обвиняемого.

Автор признает, что в вопросах вины позиции защитника и обвиняемого обычно совпадают. Однако в правовых аспектах могут возникать расхождения, требующие профессионального заключения адвоката. В таких случаях адвокат должен руководствоваться не только волей доверителя, но и правовыми нормами, что подчеркивает его самостоятельный процессуальный статус.

Ключевые слова: *право на защиту, защитник, адвокат, процессуальный статус, представитель, процессуальная независимость, кодекс профессиональной этики адвокатов.*